



ԽԱՐԽԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒՆԻՍԻ 4-ին. Թիֆլիս. №23.

Տ

ԳԱՐԻԻԷԼ ՍՈՒՆՅՈՒԿԵԱՆՑ

Իմ վախտով սրանք ճիանկեղիք (մրջին) էին. հիմի էլի բան ին դասի... ԽէրՏէր Աստուձ. կուլի վուր էլի իքմին դառնան մինձանան... Հա- մա էնթաուր ին մէկգմէկու ուշունց աալի որ... անտիկմօրի խօսքիբ ին խարջում, հէր օխնածները, ու էլի լաւ է, վուր էս բոյբուսաթին ին մնացի...



Лит. С. Быхова

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ:

1911 թ.

«ԽԱՔԱԲԱԼԱ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՆԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրելու ցանկացողին 75 % զեղծ:

Ձրի կարգացողներին պէտք է նկարենք զլիսիվայր:

VI Տարի

ՄԱՔԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթամթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՔԱՔ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլիկիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Անհրաժեշտ բերք բոլոր բնօճիկների համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթիկն ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիկ ուզի: Հասցէն՝ Тифлисть Музейный пер., редакция „ХАТАБАЛА“:

Արասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Ժամանակակուր խմբագիր՝ Ս. Մուրայաճեան

«ԽԱՔԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑԸ

1911 ՅՈՒՆԻՍ 30 օր

4

Суббота ՀԱՐԱԹ Ծափտօո
Լուսնի 14

- 5 (կիր.) Ամսեղարձ յօրեկանին Շիրվանզագէի մեր սիրեցեալ, որին ազգն հայոց յօրեկանի ժամանակ այնքան ապահովեաց սաղա թղթերով, որ վիպասանն յարգելի այլևս կարիք ոչ զգայ վէպեր գրելիս թղթի փող վճարել:
 - 6 (բ. 2.) Աւուրն գայս անձրեային եղիցի. սակագինն պուղրիի պակասեացի 25 տոկոսաւ:
 - 7 (գ. 2.) Տօն արանց և կանանց արշին ու կէս լեզու ունոյաց, որոց կարիքն մեծ է ի մէջ կօնգրէսին խողաղարաց:
 - 8 (դ. 2.) Յիշատակ շարչարանաց մըռըզ վարժապետին Յովհաննու, որ զպրօցն Մաղբատու վարէր Տէր-Քօղիկեան սխտեմաւ: Խորհուրդ տամ վարչութեանն ճեմարանու տեսուչ կարգել զնա:
 - 9 (ե. 2.) Տօն աստղագիտաց, տօմարագիտաց և օրացուցագիտաց ամենայնից, որք ոչ հարցանին թէ զինչ են կարուցեալ և զինչ ոչ հեն:
 - 10 (ուրբ.) Պահք: Քանզի մալ սակագինն հասեալ է անասելի բարձրութեան, ուստի պաս պահողաց թիւն ևս անեսցի նոյնքան: Այլպիսով պաս պահողք ուղիղ յարարեալիս զոճան մալ սակագինն:
- Աստղագէտ—տօմարագէտ և օրացուցագէտ
Փարեմուզ

ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛ ՊԵՃՏՕՆԱԿԱՆ

Այսօր տօն է, ու էտսւ
միգէզով էլ
Վունչ մի թաւուր հրամանք չինք
արձակում:

Ստորագրեց իրա սակութար աջ
ձեռքով)
Պաթարաւա ամենայն հաուց՝
Դասապար Կալատուզով

Քարտուզար՝ Եզուզ ծայրահեղ վարդապետ
Ատենադպիր՝ Ծնորիկ արք արեղայ.

Ա Ռ ՊՏՏՆԱԿԱՆ ՀՆՈՒՑ ԸՍԿ

Էս օր գրուստ հինգ տարի էլաւ
ինչ վուր հաուց ասկը խաթարալի մէ-
չը նընգաւ ու խաթարալէն էլ հաուց
մէչ ծնաւ:

Էսօր հինգ տարի էլաւ էն օրիցը,
իփուր հաուց ասկի դուրձիչները
մուքթա-մուքթա իրենց սակութար
փաթրեթնիրը տեսնու՞մ ին միր ան-
տիկա «Պաթարալում» ու դրա համա
վուչ մի գրոշ չին խարջում:

Մուքթայի սովոր միր պատուական
ասկայինները, էսօր հետտի բանիր ին
անոււմ, ու մէ գլուխ մարթիք ին
զրգում, ինթրում ին իրենց սուրաթ-

նիրը միր ժուրնալի մէչ գցինք, ու
իժում ինչ սուրաթնիր:

Աստուձ գիղենայ, հետտի սփաթնիր՝
վուր իսկի մալի տալու էլ արժան
չին:

Էսօր էսթաւուր օր է, դուք կի վի-
զիք թէ մասխարութին է. հինգ տա-
րումը՝ էլ հայերու մէչ մարթ չէ մնացի,
վուր իրենց գլուխը միր «Պաթարա-
լում» տիհած չըլի, ու հինգ տարում
մէչ հայ տուն էլ չէ մնացի, վուր միր
«Պաթարալէն» մտած չի:


Մինք էսօրւանից ինչկըլի էսօրը ու
էսօրւանից էլ մինչկըլի էն օրը՝ ի կա-
տարածն աշխարհի, մինչկըլի էն օրը
իփուր Միքէլ-Քաբրիէլի դուռնէն կու փչի
էստի ինք. թէ կանաք դուք էլ էստի
կացէք:

Մինք վուր աղաք, հինգ տարի աղաք,
իսկի մէ գուշման չունէինք՝ հիմի
գուշմաններով լցւիլ ինք—ու ինչի հա-
մա է:

Մարթը էդ պիտի հարցնի է:
Այ լազաթ:

Շատիրը նիղացիլ-թշնամացիլ ին,
վուր իրենց սփաթնիրը նխշում ինք,
փաթրեթնիրը դուս բերում. շատերն
էլ թէ ինչու իրենց սփաթններին լա-
կրասկէք չինք քսում:

Շատ մարթ միգմէն բեղամալ է
էլի, չունքի իրան արածը մինք ծաղ-



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՃՆ ՈՒ ՅՈՒՆԵՐ

Էջը շան հետ մի տեղ կանգնած,
Երկուսով էլ շատ փիս քաղցած,
Գնչները գետնին քսելով,
Քար ու աւազ հոտոտելով՝
Ուզում էին մի բան գտնել,
Քաղցած փորները կշտացնել:

Մէկ էլ յանկարծ էջը զուաց.
Շունը՝—այս բանից զարմացած,
Ականջները վեր բարձրացրեց,
Ու մեր պարոն իշին հարցրեց.

—Ախր, այ էջ, ի՞նչ ես գտում,
Դատարկ փորով այդպէս գոռում,
Միթէ ուրիշ էլ զարդ չունես,—
Քիչ է մնում քաղցից մեռնես:

—Միամիտ ես, իմ շուն ախպէր,
Խօսեց էջը. մէկ էլ զուաց.
Միշտ երգում է իմ խեղճ տէրը
Չընայած որ չի ճարում հաց:

Մենակ խօ տէրս չէ այդպէս,
Բոլոր մարդիկ այդպէս են միշտ,
Տեսնում ես նրանց միշտ ժպտերես՝
Իսկ սրտներում անհամար վիշտ:

Բախօօ



ՀՆՅ ԿՊՐՈՑՆԵՐԻ ՈՄԱՆՈՑՆԵՐ

(Ըստ Է.Ճիրմեղի)

Սեպտեմբեր. Հրաւեր ուսուցիչների և վարժուհիների. յայտարարութիւն լրագիրներում. հոգաբարձութիւնը խոստանում է խոշոր վարձատրութիւն և յայտնում է, որ վճարը կանխիկ է և դպրոցը լիովին ապահոված:

Հոկտեմբեր. Ստացւում են առաջարկութիւններ «փորձաւոր և գիտական պատրաստութիւն ունեցող» ուսուցիչներից:

—Վերջապէս գտանք մեր ուզածը, ասում են ուրախ հոգաբարձուները:

Նոյեմբեր. Ուսումն սկսւում է, թէ հոգաբարձուները և թէ ուսուցիչները գո՞հ են.

—Շատ յաջող տարի է լինելու, ասում են միմեանց:

Դեկտեմբեր. Փոխադարձ հիասթափումն. ուսուցիչները գրել-կարդալ չգիտեն. հոգաբարձուները քարի պէս ժլատ են: Դպրոցը ստուշում է, փայտ չկայ. կոտրած ապակիներից քամին ազատ մտնում է դասարանները: Ուսումնարանի ապահովութիւնը երազ է եղել: Առաջին ընդհարում հոգաբարձուների և ուսուցիչների:

Յունւար. Ուսուցիչները լուրջ կուռից յետոյ ստանում են նոյեմբեր ամսւայ ոտճիկի կէսը.

Փետրւար. Ուսուցիչ Թորոսեանը սիրա-

հարում իմ է աշակերտուհու հարցը, յարցը տարածւում է. բամբասանքի հետքեր չկան: Վարժուհի Ասեղեանին: Փոթորկալից մանկավարժական ժողով, է ուսուցիչները բաժանում են երկու կուսակցութեան: Մարտ. Ընդհարում աշակերտների և տեսչի միջև մի աշակերտի ծեծելու պատճառով. բուն պայքար երկու կուսակցութիւնների:

Ապրիլ. ձեմարանցի ուսուցիչ Գաղափարեանը (20 տարեկան) սիրահարւում է վարժուհի Շորշարեանին (41 տարեկան):

Մայիս. Թունդ կուռից յետոյ ուսուցիչներն ստանում են նոյեմբեր ամսւայ ոտճիկի միւս կէսը:

Հոգաբարձու Գրգանեանը ուղարկւում է քաղաք դպրոցի համար փող ժողովելու, բայց հիւանդանում է և փողը իր վրայ է ծախսում: Հիւանդութիւնը քստ բժիշկների սփող ուտելու հիւանդութիւն է:

Յունիս. Արձակուրդ: ձեմարանցի պատկուում է վարժուհու հետ: Հարսանիքին ուսուցիչները հաշտւում են, և վճուում՝ դատարանով պահանջել իրենց ոտճիկը:

Արիւնահեղ ճակատամարտից յետոյ (հոգաբարձութեան հետ) ուսուցիչները մեկնում են հայրենիք:

Յուլիս. Հոգաբարձութիւնը հրաժարական է տալիս: Ուսուցիչները դիմում են դատարան: Դատաւորը վճռում է, որ ուսուցիչները կարող են ստանալ իրենց ոտճիկը դպրոցից, բայց ոչ հոգաբարձուներից, որովհետև նրանք այլևս հոգաբարձուներ չեն: Ուսումնարանը վեր գրելուց յետոյ ուսուցիչները ստանում են 1 կոտրած քանոն, 3 կոտր կաւիճ և 1 կեղտոտ սրբիչ գրաստիպակի, որ և բաժանում են իրար մէջ:

Օգոստոս. Նոր հոգաբարձութիւնը որոշում է հրաւիրել նոր ուսուցչական խումբ, այլև՝ առաջիկայ ուսումնական տարին աւելացնել ուսուցիչների ոտճիկը ու այդ մտքով յայտարարութիւն է ուղարկում լրագիրներին:

Կիսնէս

Առանց պատասխանի հարցեր

—Եթէ ամեն ինչ թանգանում է, հապա ինչո՞ւ կեանքը եփած բողիկից էլ էժան է դարձել:

—Եթէ ժամանակը ոսկի է, հապա ինչո՞ւ իմ պարտքերը՝ ժամանակի ընթացքում կըրկնապատկւում են:

—Եթէ կինս, ինձ գաւաճանում է, հապա ինչո՞վ է մեղաւոր իմ ճակատս:

Ինքը գող, սիրտը դող

—Սիրելի Մարիամս, ասիք ի՞նչպէս անցկացրելը դու գիշերը՝ իմ գնալուց յետոյ:

—Եւ դու հաւատում ե՞ս. Լեւոն, ինձ միայն զրպարտել են քեզ մօտ, ուրիշ ոչինչ: Երգւում եմ, որ ոչինչ չի եղել:

րիւ ինք, շատ մարթ էլ էնդուր՝ վուր իրա խօսկին չինք աւտացի:

էստի նիդանալու ի՞նչ կայ վուր. համա փիս մարթը՝ Զատկի իրա օրն էլ փիս կուլի:

Հէր օխնածնիր, միւր սուրաթնիրը իրանք իրանց ին դուս գալի, միւր կրասկէքը արժանաւորութենի վրէն է քուում:

Մայ:

էսու համա էլ—այ ինչ տարին անցաւ ու ով բեգամաղ է էլի թող էլ բեգամաղ չի—դաւնոստը կորցրիլ ին: էստուր իղը չալիշ գան շնուրքով ու խիլքով ժաժ գան—էտ էլ լաւ է:

էնթաւուր բան արէք, էստուր եղը վուր լաւ կրասկէքով նշխինք. «Սաթարալի» ինչ տարին թամամւից, Աստուճ ձիր գլխից, օջախից, գուրճ ու մուրճից միւր «Սաթարալէն» անպակաս անէ, ու ձիգ էլ միւր բաժնորդների ու կարթացողների դաւթրիցը անջնջելի անէ:

Աստուճ օխնէ ձիգ էլ՝ միգ էլ. խէրով ըլիք՝ դուք էլ—մինք էլ:

Աստուճ էն էլ տայ, վուր վրայ հարիր ու ինչ տարին մինք էլի էստի ոաստ գանք ձիգ հիգ:

Ամէն:

էսօր, ով ինչ միղկ գործի էք, թէ աչքի տակով բան իք տեհի ու չիք կանացի ձեռք բերի, թէ աղջիկ էք հաւնի ու մտքի մէջ փիս-փիս բանիր էք անցկացրի. աղջիկըք, թէ դուք էլ լաւ-լաւ աղերք իք տեհի ու ուզեցիլ իք մարթու գնալ, ու չիք կանացի, թէ գիշերնիրը թայիր-թայիր երազնիր իք տեհի, թէ աւուտեհան չայ խմելիս «Սաթարալին» չիք յիշի, թէ ճաշից էղը միւր գրածնիրը մտաբերի, թէ է պսս իք կերի ու չիք կանացի մարսի, թէ «Մշակ», «Հորիզոն», «Հովիտ» ու էլ ուրիշ գազէթնիր կարթացիլ իք ու չիք ասի՝ է—ինչ ին գրում, էգ բոլոր միղկիրը բաղշում ինք, թային-թային բաղշում ինք, ու խնթրում ինք միգ շուտ շուտ յիշէք վուր մինք էլ ձիգ յիշինք միւր քէֆի վուխտը:

Փասպար Կալասուզով
Խարարայա ամենայն հատուց





—Սարուխան, մենք կամաց-կամաց լատինանում ենք. էհ, կըստ որ...
 Սարուխան.—Կընչանակի քաղաքակրթում ենք, ինչ հոգ...
 —Ի՞նչ հոգ... բաս հայ կաթոլիկ եպիսկոպոսական թիւը ի՞նչ պիտի անենք:
 Սարուխան.—Թող լինի, մուզէումն պէտք կըզայ:

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍ ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՉ



Միվերս.—Դուք պարտնայք հաշապահներ, ոչ թէ իտալական հաշապահութիւն էք իմացել, այլ և պարսկական, հնդկական, հրէական, միթոնական և... և ինձ պիտոյ՝ ձեզ մօտ գալ ուսանել, ոչ թէ դուք ինձ մօտ. այստեղ մի թիւրիմացութիւն է:

ՀՆԱՐԱԳԻՑ ԱՄՈՒՄԻՆՆԸ*)

— 0 —

(Շարունակութիւն)

Երբ մի շարաթից յետոյ Մոծակեանը վերադարձաւ իր ճանապարհորդութիւնից, դարձեալ մի քանի օր մեծ հոգսերի մէջ էր: Վերջապէս մի անգամ երեկոյեան թէյը խմելու, նա գիմեց կնոջը.

— Է՛, յետոյ, Հեղինէ, ի՞նչպէս էիր ժամանակդ անցկացնում առանց ինձ:

— Այնպէս էի ժամանակս անցկացնում, որ ձեզ հարկ կը լինէր սաստիկ խանդոտ լինելու:

— Ասուած մի արասցէ: Չէ՞ որ արդէն ասել եմ քեզ, որ ես ամենին խանդոտ չեմ: Բայց ասա, իմ բացակայութեան ժամանակ արդեօք ստացել ես նամակ որևէ մէկից:

— Ո՛չ, չեմ ստացել: Կարող էք հանդիստ լինել,— պատասխանեց Հեղինէն:

— Հեղինէ, սիրելիս, ի՞նչ կարիք կայ սուա խօսելու: Ես գիտեմ, հաստատ գիտեմ, որ դու նամակներ ես ստացել: Գիտեմ մինչև իսկ թէ քանի հատ: Ինչ ստացել ես չորս նամակ. երկուսը վարդագոյն ծրարներում մէկն աւելի մեծ, միւսը փոքրը:— յետոյ մի նամակ սպիտակ ծրարում և մէկը՝ բաց կապոյտ ծրարում:

Կինը զարմանքից անգամ ծափ տուց:

— Այդ ի՞նչպէս իմացար:

— Հապա ինչի համար են փոստային ցրբիչները...: Այն ցրբիչին, որ միշտ հասցնում է մեր նամակները, ես համոզեցի մտքումը պահել ինչ նամակ որ ստացւի քո անունով:

— Ահա թէ ի՞նչ,— բացականչեց Հեղինէն: Եթէ այդպէս է, պիտի ասեմ՝ որ բացի փոստային ցրբիչներից կարելի է ստանալ նամակ և հատարակ սուրճանդակների միջոցով: Եւ ես ստացել եմ աւելի շատ նամակներ, քան թէ այդ ձեզ յայտնի է:

Մարդը հեգնօրէն ժպտալով պատասխանեց.

— Գիտեմ, Հեղինէ: Այդ էլ գիտեմ: Ես բոլորը նախատեսել եմ բոլորը: Սուրճանդակների միջոցով դու ստացել ես դարձեալ երկու նամակ:

— Այդ անհաւատալի է,— զարմացաւ Հեղինէն:— Բայց ի՞նչպէս իմացար այդ: Չէ՞ որ դուք չէիք կարող դուշակել՝ թէ ո՞վ պիտի լինի նամակ բերողը՝ նրան կաշառելու համար: Այդ անհասկանալի է:

— Անհասկանալի բան չկայ այստեղ: Հարկաւոր էր միայն բանակցութեան մէջ մըտրել բարապանի հետ... Իմ պատէրով նա կանգնեցնում էր բոլոր նամակ բերողներին, հարցուփորձ էր անում թէ՛ ո՞ւմ մօտ են տանում նամակը և այլն: Նա ունի նշանակած իր յուշատետրում թէ՛ ի՞նչ օր և ո՞ր ժամին քեզ նամակ են բերել: Ես գիտեմ,

սիրելիս, որ բացի երկու նամակներից, դու ստացել ես այս միջոցով և շարաթիցի մի տուփ, որ բերել է մի նամակ քեզ:

— Ո՛հ, ամուսին չէք դուք, այլ մի խուզարկու ոստիկան էք:

— Է՛, Հեղինէ: Այդ ի՞նչ է որ. ես գեոշատ բան գիտեմ: Ինձ յայտնի է, սիրելի ամուսինս, թէ ո՞ր օրը դու տանը չես ձաշել:

— Օ՛, ինչ վերաբերում է դրան՝ այդ երբէք չէք կարող իմանալ,— դառն հեգնանքով բացականչեց կինը և անկեղծօրէն վերայ բերեց.— Եթէ այդպէս է, եթէ դուք կաշառած էք եղել մարդկանց, ես էլ իրաւունք ունէի նոյնն անելու: Կաշառելով մեր աղախունն՝ ես խօսելու արգելի էի նրան յայտնել ո՞ւմ եիցէ, որ ես երբեմն տանը չեմ ձաշել: Բայց մի գուցէ դուք աւելի՞ էք վճարել և նա դաւաճանել է ինձ:

— Հեղինէ, Հեղինէ: Այդ չափազանց թանկ կընստէր մեզ վրայ: Բաւական չէ՞, որ դու վճարել ես, ես էլ պիտի վճարէի նրան...: Ո՛չ, ո՛չ, եւ վերջապէս կինը միշտ կնոջ կը պաշտպանի, մանաւանդ աղախինը իր տիրուհուն:

Հեղինէն՝ ուղղակի շարած ամուսնու այս խօսքերից, յակամայից հարց տուց.

— Յապա ի՞նչպէս կարող էիք իմանալ այդ:

— Հի-հի-հի: Հի-հի-հի,— ինքնազո՞հ կերպով ծիծաղեց Մոծակեանը և չկարողացաւ

— Ըր ո՞վ է... ո՞ւմից է այդ... ի՞նչ կայ...

— Մի չքաւոր աշակերտ է, մօր հետ և...

— Հեռացիր այստեղից յիմար... ի՞նչ աշակերտի ժամանակ է... գնա սուղ արտ իսկոյն... Чертъ побери! կարծես այստեղ փող ենք կտրում, կամ թէ պարտական ենք... մարշ...

II

Այս էլ, ննջարան է. ճոթալսածառ Փաստուրեանը մահճակալի առաջ, գիշերայ շապկով ու անդրալարտիկով, թուղթ ու մատիտը ձեռքին, հարցեր է տալիս մինչ պարանոցը վերմակում փաթաթուած իր կրնոջը՝ Զարինին— թէ ի՞նչ է հարկաւոր «Թօնլիթ» ուխտ գնալու համար...

— Ի՞նչ Թօնլիթի ժամանակ է այ մարդ... այս կէս գիշերին, եկ պարկիր... շնջում է կինը:

— Չէ, Զարի ջան, չեմ կարողանում քնել, մեղաւոր հոգիս չի հանգստանում... վերջին ամիսը— ինձանից ճոթեղէն սպառող պառաւ դէղիներին մինչև 100 ընդլի կեղծ փողեր եմ տւել «սղաշիլ» մէջ. շարաթ օրերը, կոյր մուրացիկների ափը 3 կոպէկանոցներ դնելով, եղած դէպքում արծաթէ փողեր եմ յետ վերցրել, մի ոմն Շալաբաւձէի վրայ մնացած 20 կոպ. տոկոսի փոխարէն, ծախեցի նրա կնոջ կարի մեքենան, որով ողջ ընտանիքի ապրուստն էր

շուտ պտուկած) իր թաւշեայ փափուկ գահաւորակի մէջ, ծխում է Հաւաննայի անուշաբոյր «La favorita»-ն. առաջը գեղարւեստօրէն քանդակուած սեղանի վրայ, դարսուած են Շարտրեզն ու Կիրլասսօն, նարինջն ու քաղցրաւենիքը, իսկ իր գերմանուհի հարձը, հայեացքն անթարթ յառած աղամանդազարդ նոր ժանեակին, որն իսկոյն նւէր է ստացել Պիւլաճոգեանից, ուղում է հեկեկալ անտանելի վշտից...

— Нег! Палапек Мирзаджаничъ! За шѣм это минѣ, эти всё бриллианты один карат нѣту... што эти... луше суррогаты носит! што это знашит! капиталист Палапек и такой ништожный, ништожный сюрприз... бери! не хочу! по поштѣ отсылай женѣ! бери! я не желаю!...

Կրեստը զսպելով իր հաստատ ու լայն ըռեխին խաղացող անճոռնի ժպիտը, մօտենում է գրասեղանին ու գրպանից հանելով բանկային ընթացիկ հաշիւների տետրիկը, կտրօններից մէկի վրայ (ինչպէս մատնում է նրա գրչի շարժումը) նշանակում է մի ծուռ-մուռ «1» և կողքին երեք սգեղ գերօններ ու մի երկիւղած համբոյրից յետոյ ծածկում է նրա հետ թաւշէ պարտերների յետև:

Այդ միջոցին ներս է մտնում սպասաւորը մի ծրար ձեռքին:

Պարտերների տակ նորից երևում է Բալաբէկը:

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Պ Ա Ն Օ Ր Ա Մ Ա

Վերջին օրերս, յոգնած միօրինակ անցնող օրերիս տաղտկութիւնից, ես մի պըտոյտ կատարեցի մեր թաղում: Ինչ պատուհան կամ դռան բացուածք էի նկատում, բուն հետաքրքրութեամբ մօտենում էի— ներս էի նայում, ականջ դնում ու լուսանկարում... մի համեստ պանօրամա կազմելու համար:

Երէկ լրտեսիցի մեր թաղի արեւելեան մասը միայն, որը առաջ եմ բերում ստորև, իսկ շարունակութիւնը կը տամ շարժին, եթէ միայն ազատ ժամանակ կը գտնեմ, որովհետև ներկայումս զբաղուած եմ գլուխս սաղ պահելու աշխատութեամբ... չզարմանաք հա... այսպիսի ժամանակներում սոսկ գլուխը սաղ պահելն էլ մի քաջութիւն է:

Դէ ուշադրութիւն, սէանը սկսում եմ...

I

Սա մի ճօխ ու հմայող դահլիճ է, ուղղակի արքայական. LUX ու հմայքի մարին աւելորդ եմ համարում խօսել, ինքներդ երեւակայեցէք— դահլիճը պատկանում է դարաբաղցի միլիոնատէր Պիւլաճոգեանին. երեկոյ է, Կրեստը խորը նստած (աւելի

զսպել իր ցանկութիւնը պարծենալու՝ թէ ինչ գաղտնի միջոցով իմացել է և այս մանրամասնութիւնը:— Իսկ կուզես իմանալ թէ՛ ի՞նչպէս տեղեկացայ՝ թէ՛ ո՞ր օրը դու տանը չես ճաշել: Օ՛, այդ չափազանց հեշտ էր և ամենևին կարիք չկար հարցուփորձել աղախնին... Ես միայն պահանջեցի աղախնից ապառիկներէ զրքոյկը և աչքի անցնելով այն՝ իմացայ, որ ամս. 6-ն թէ մսավաճառից և թէ՛ այլ խանութներէց ոչինչ չէ գնւած. նոյնը և ամս. 9-ն... կընշանակէ՛ որ ան այդ օրերը դու տանը չես ճաշել: Հի-հի-հի: Միթէ կարծո՞ւմ ես, սիրելիս, թէ ես առանց նպատակի պատելիքցի վերցնել մթերքները զրքոյկով և ո՞չ կանխիկ փողով: Ահա թէ ի՞նչ գաղտնի ծրագիր ունէի ես: Հի-հի-հի:

Ապա կարճատև ընդմիջումից յետոյ, ճիշտելով կնոջ վրայ իր թողած ապաւորութիւնից, Մոսկեանը շարունակեց.

— Այդ դեռ բոլորը չէ, ես դեռ էլի բան գիտեմ:

— Ի՞նչ, էլ ի՞նչ գիտէք,— հարցրեց սարսափած Հեղինէն:

— Գիտեմ և թէ՛ ո՞ր օրը և ո՞ր ժամին դու նստած ես եղել պատուհանի մօտ՝ ուսանողներէ բնակարանի դիմաց...:

— Երևի դարձեալ մէկին կաշառած էիք:

— Ո՛չ, մի անշահախնդիր մարդ այնքան սիրալիւր գտնեց... Իսկ գիտե՞մ թէ ո՞վ է կենում ան այն սենեակում, ուսանողների բնակարանի կողքին:

հայթայթում և երբ դառնացած Շալարացէն ինձ հայհոյեց դատաստանական ոտիկանի ներկայութեամբ, ևս սուտ ձոհօճով և կեղծ ապացոյցներով յայտնեցի ուր հարկն է, որ իբր թէ նա դրամաշորթ է... և հիմա խեղճը ամեն բանից զրկւած, տառապում է բանտում ու ստում են՝ արիւն է հազում... վերջապէս, ամեն սուտ բաներում յանուն Աստուծոյ երգումով եմ յաղթանակ տարել... Է՛՛ ո՞ր մէկն ասեմ... և գիտես Զարի ջան, Թելիթը իբրև իմ պապական խաչը, անշուշտ ինձ թողութիւն կըտայ...

— Բայց, չէ որ դու այնուհետև նորից կըշարունակես...

— Գուցէ... չգիտեմ... բայց հօ գոնէ մի առժամանակ կըհանգստանամ, թէ չէ այս ինչ բան է, չեմ կարողանում քնել...

III

Մա մի ողորմելի խրճիթ է: Ծխախոտի գործարանում եղի նման աշխատող-բանուոր Օննիկը, իր շարաթավարձը ստանալով, չի մտացել ուրախացնելու իր գոյգ մանուկներին— Յ-ով. Թումանեանի պատկերազարդ լեզնդաներով, իսկ իր աշխատասէր, սիրող ու հաւատարիմ ընկերուհուն— տան համար անհրաժեշտ իրեղէններով: Մինչ կինը համեստ ընթրիքն է պատրաստում, Օննիկը պատմում է նոյն օրան նորութիւններից և թէ ինչպէս իր ստացածից մասն է հա-

— Ո՞րտեղից կարող եմ իմանալ այդ: — Ճշմարիտ է, դու այդ իմանալու կարիք չունէիր, իսկ ինձ հարկաւոր էր և ես տեղեկացայ: Այնտեղ բնակում է մի ծերունի կաղ զինուորական. ո՞չ մի տեղ դուրս չի գալիս, ամբողջ օրերով նստած է իր սենեակում...: Իմանալով այդ՝ ես անմիջապէս այցելեցի նրան... մի չափազանց համակրելի ծերուկ է և շատ շուտով մենք մտերմացանք, բանից դուրս եկաւ, որ նա ևս իր ժամանակին ամուսնացած է եղել երիտասարդ կնոջ հետ և նոյնպէս ստիպւած է եղել հոգս տանելու իր պատւի պաշտպանութեան մասին...: Նա սիրով համաձայնեցաւ օգնել ինձ, որովհետև այդ բանը նրան մինչև իսկ զարմութիւն էր պատճառում... Հեռագրատակով նայել և գրել տեսածը: Ես, ան, իբրև հետևանք նրա արած դիտողութիւնների, վճռեցի փոխել մեր սենեակների կարգաւորումը, քո սենեակը և իմ առանձնասենեակը կըփոխադրեն մէկը միւսի տեղը, այնպէս որ դու այլևս չես կարող նստել այս պատուհանների մօտ, իսկ տանից դուրս գալիս ևս կըկողպեմ իմ առանձնասենեակը...:

Գիշերը Հեղինէն լսեց մի խուլ աղմուկ սրահում, ուր դրած էին իր հագուստեղէնի պահարանները: Իսկոյն վեր թռաւ անկողնուց և հաղթափերը հագնելով, կիսամերկ, մոմը ձեւին, դուրս եկաւ սրահը և տեսաւ ամուսնուն, որ խուզարկում էր իր զգեստները:

նել նաև թաշատուր Արովեանի մահարձանի օգտին 50 կոպէկ: Ընթրիքից յետոյ անասնաման բաղգաւոր ամուսինները, գոհունակութեան քաղցր ժպտներով լսում են իրանց սիրասուն փոքրիկներին, որոնք բուն հետաքրքրութեամբ նոր գրքոյկների վրայ թոթովում են սարւած—

Ժամանակով կատուն ծօն էլ Սունն էլ զլխին գլակ չունել...

IV

Ննջարան է. տիկին ձգրիկն ու իր կօնդրարանդ սիրահար X-ը, շիրմայի յետև չգիտեմ ինչով են զբաղւած կամ ինչ բողկեր են ուտում... այդ միջոցին ձգրիկի ամուսինը վերադառնում է և մօտենալով շիրմային սարսափահար կանգ է առնում որպէս արձան կտրւած... վերջապէս դիմելով ամօթահար X-ին, մըմնջում է լալաձայն — Տէր-հայր. բա էդ բան ա՞ որ դու տեսում ես...

V

Մի գինետան առանձնահամար է: Երկու ընդազուրկ պարոններ կոնծում են ու խօսում:

Բեժիստօրը.— Պ. Ապրօ զգաստացէք վերջապէս, դուք արախաւ էք... բա է շողակրատել դատարկ բաների մասին... աչքի

Առանց շփոթելու Մոսկեանը կատասխանեց կնոջ հարցական հայացքին.

— Ես կամենում եմ օգնել ինձ, թէ իմ բացակայութեան ժամանակ դու չիս զգեստներդ ես հագնել:

Եւ նա ճշտութեամբ տեղ կնոջ հագուստներից մի քանիսի անունները:

— Բայց վերջապէս այդ ի՞նչպէս իմացաք,— նորից բացականչեց զարմանքից ապշած կինը:

— Շատ հեշտ կերպով: Մեկնելուցս առաջ ես քո բոլոր զգեստների քղանցքները կարելի էի մի բարակ թելով... Հագնելիս ի հարկէ դու կտրել ես այն, առանց նկատելու: Եւ անա ես գիտեմ. այն զգեստները, որոնց թելերը կտրւած են, կընշանակէ, որ դրանք հագել ես:

— Ո՞հ, Տէր Աստուած, և դուք դեռ ստում էիք՝ թէ խանդոտ չէք:

— Ամենևին: Ես միայն միջոցներ եմ ձեռք առնում իմ ամուսնական պատիւ պաշտպանելու համար:

Մ. Ս.

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԻ ՃԱՇԱՐԱՆՈՒՄ

— Ստանան գիտի, թէ բիլշակսի տեղ ինձ ի՞նչէք հրամեցնում... ինչոր եաշկոտոց և ճրագի մէջ տապակած կաշի է նման, ապուխտ... Իսկապէս կաշի է...:

— Ճշմարիտ, որ գիտուն ու խելօք ճաշակի տէր էք եղել այ՛. ամեն բան փորձել էք ու կաշին հէնց համիցն էք ճանաչում.—

առաջ ունենալով մեր հրէշաւոր դեֆիցիտները, դուք ուզում էք որ այս միակ շօր-նիսի ներկայացումն էլ յետաձգել...

Ապրօ.— Ինչ կուզէ լինի... ես այս գիշեր չեմ խաղալու. սա պրինցիպլ խնդիր է. ես ամբողջ 10 տարի ծառայել եմ հայ բեմին, ևս Շեքսպիրի հերոսներին եմ պատկերացրել ամենաիսկական գոյներով... ես... ես... և յանկարծ աֆիշայում իմ անունը ամենավերջին կարգումն եմ տեսնում ապուած, իսկ Լաֆիկեանինը ամենաառաջին տեղը... ապացէք խնդրեմ... ես նրանից ի՞նչով պակաս եմ...:

Գոնէ կարգին գրել-կարգալ գիտեմ...

VI

«Մըրիկ»-ի խմբագրատունն է: Սրբագրւում է № 2-ը: Տպարանի ծառան գալիս է յայտնում է թէ՛ նիւթը պակասում է. խմբագիրը շարած սկսում է քրքրել զամբիւղն ու անկիւններում զիլւած ծրարները և banal յիմարութիւններից աւելի ոչինչ չգտնելով, քորում է ծոճրակը: Փոքր ինչ մտածելուց յետոյ նստում է և սկսում է գրչով յոխորտալ «Զիլգագ» թերթի գէմ... թուք ու մուր, ուշունց ու ըխարուշուծիւն... ինչ ասէք գրում է:

— Պ. խմբագիր, դիմում է նրան սրբագրողը— տխր «Զիլգագը»-ը մեզ համեմիս ու համակիր մի օրգան է...

Օրինակելի դաստիարակութիւն

— Լսեցէք, պ. Նիկոլ—թէ և իմ գործս չէ, բայց պէտք է ասեմ, որ դուք զարմանալի վատ էք վարուում ձեր մեծ աղջկայ հետ: Գիտէ՞ք, նա այժմ նստած լաց է լինում:

— Է, բարեկամս, ես դաստիարակում եմ աղջկանս նահապետական ձևով, առանց ժամանակակից ազատամտութեան և թարսապատիկ գաղափարների, այլապէս սատանան գիտէ, թէ ի՞նչ դուրս կըգայ մեր երիտասարդութիւնից:

Երևակայեցէք, օրինակի համար, այս օրերս մի երիտասարդ կին հայհոյել և համարձակեց նոյնիսկ ապտակել ամարային զբօսավայրում մի պատշաճ աստիճանադրի, նրա համար, որ նորին գերազանցութիւնը հաճել էր այդ կնոջ վրայ ուշադրութիւն դարձնել՝ գրկելով նրա իրանը և թշից էլ կմշտել էր: Է՛, դա ինչի՞ նման է, հա:

Ոչ, ես մտադիր չեմ իմ աղջկան այդ՝ և նման փրասակար գաղափարներով դաստիարակել:

ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՄՏԱՅՈՒՄՆԵՐԻՑ

Ազնիւ մարդիկ ստորներին շատ բանով պարտական են,— զի, եթէ ստորները չլինէին՝ ազնիւ ժարգկանց վրայ և ոչ ոք ուշադրութիւն կըդարձնէր:

Ամեն չարիք ունի իր բարի վախճանը, բացի կեանքից՝ որ վերջանում է մահով:

Մեր հարսների մէջ տեսնում ենք այն, ինչից որ նրանք իսպառ գուրկ են, բայց մեր կանանց մէջ չենք նկատում և այն, ինչ որ իսկապէս նրանք ունեն:

Փորձած խորտկագէտների վկայութեամբ թէ կանայք և թէ որսի միսը դուրալի են միայն այն ժամանակ, երբ փոքր ինչ փշացած են:

Սիրտը մի ապակի է, շարդելուց՝ կարելի է կպցնել, բայց առաջւայ նման չի լինի:

Յիմարը նման է նեղ ձիւռ ունեցող մի շշի, որքան քիչ բան է իր մէջ պարունակում, այնքան աւելի աղմուկ է հանում:

Ամեն օր իմանում ենք մի նոր բան և մոռանում հինը:

Մ. Ե.



ԿԼԹՈՂԻԿՈՍԵԼԵՆ ՊԵՏԻՐԱԿՆԵՐԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԳՆՆՉԵԿՈՒՄ

Կիրակի, մայիսի 8-ին, դպրոցի դահլիճում կայացաւ Գանձակի շրջանի կաթողիկոսական պատերազմների ժողովը:

Ներկայ էին մօտ 69 պատերազմներ, որոնք ժողովի նախագահ ընտրեցին Լեոն վարդապետին, որը շնորհակալութեան փոխարէն, պատերազմների գլխին մի-մի ձրի պահպանիչ ասեց:

Հայր սուրբը կաթողիկոսութեան հարցի մասին խօսելով, ի միջի այլոց յայտնեց, որ նա՝ հայերի համար բացի կրօնական նշանակութիւն ունենալուց, ունի նաև դիպլոմատիկական նշանակութիւն, ուստի, յորդորեց պատերազմներին, որ նրանք, խղճի մտօք և արժանաւոր պատգամաւորներ ընտրեն:

Մովսէս Եպիսկոպոսնանց. — Նախկին կաթողիկոսների ընտրութեան օրօք, պատերազմների դէրը շատ հեշտ է եղել: Նրանք համարեա թէ առանց գլուխներին և ուղեղներին «զոռ» տալու, ուղղակի կանգ են առել, ազգի մէջ անուն ու հռչակ վայելող կանդիտատների վրայ: Այժմս այլևս հռչակաւորներ չկան, նոյն իսկ մեր ազգային կեանքին տոն և ուղղութիւն տալով, Հաջի Համբարձումը և Քալանթարը ամբողջ 8 ամիս արժանաւոր կաթողիկոսացու զբտնելու համար, այնքան են տքնիլ ու չարչարել, որ հոգիները, մարմնից դուրս է եկել, բայց, ինչպէս իրենք հաւատացնում են, էլի չեն կարողացել գտնել... ուստի նրանք խոստացել են, հրաշքով, գետնից մի լաւ կաթողիկոսացու բուսցնել և իրենց հեղինակաւոր, խօսքը ասել նրա մասին. այդ պատճառով, պատերազմների դրութիւնը, այժմս կարի յոյժ դժւար է, և, նրանք ոչ թէ միայն գլուխներին և «ուղեղներին» պէտք է «զոռ» տան, այլ և, ամբողջ օրգանիզմին, որ կարողանան ազատել, թէ հայոց ազգի «գործերի փողրաղչի» թայֆայականների ոտնձգութիւններից, և թիֆլիսում նստած, նրանց ազնաւ հրապարակախօսներից, որոնք, «զակագով» յանձն են առել, յաջողեցնելու, այս կամ այն «սեւագլխի» ընտրութիւնը...

Բժշկապետ Տէր-Գրիգորեան. — Ներսէս V-րդից յետոյ շինարար կաթողիկոս չենք ունեցել. նրանք բոլորն էլ, մանաւանդ՝ հոստոպօլցի Խրիմեան և Իգմիրլեանը էջմիածինը լափ պրիշակ են դարձրել... Որքան այժմս ես մտածում եմ, Օրմանեանի նման արժանաւոր կաթողիկոսացու չեմ գտնում բայց ես էլ պակաս կաթողիկոսացու չեմ հա:

— Ափսոս միայն որ Օրմանեանն էլ, Սամսոն Յարութիւնեանի նման պէտք եղած քաղաքագիտութիւնից զուրկ է. օրինակ, եթէ նա կարողացել էր բորսային խաղաթղթերի պէս, կուրսի համեմատ գոյնը փոխել, ինչպէս Գուրեանը, և մեր մի շարք սեւազրուխները, ու մտել էր «տղերանց» փէշերի


տակ, լաէր երիտասարդ թիւրքերի ու աւեր նրանց—

«Դուք մեզ սովորցրիք ինչպէս թիւրքերէն հոգմար կուր մղելը, դուք ինչպէս խաղաթղթերէն էք եղել և ներկայ ազատութիւնը ձեր ջանքերի շնորհիւ էք». այն ժամանակ, նա ոչ թէ կենթարկէր փողոցային ցոյցերի, այլ և, պատրիարքութիւնից չէր զրկուլ. գուցէ և ընտրած լինէր կաթողիկոս ու այսօր հայ ազգին կաթողիկոսացու գտնելու հոգսի մէջ չձգեր. թէ և նա, Արդիւլ Համիդի նման արիւնարբու ջիւադի օրօք, պատրիարքական պաշտօնը մօտ 12 տարի այնպէս քաղաքագիտօրէն վարեց, որ թիւրքաց հայաստանումը մասսայական կոտորածներ տեղի չունեցան, բայց որովհետև արիւն չհոսեց, և Ադանայի Մուշեղ եպիսկոպոսի կրակոտ ձառերի վերջաբանի նման չի եղաւ՝ «տղերքը» չհաւանեցին:

— Բացի այդ, Օրմանեան, նախօրոք չկարողացաւ, մարգարէական հոգով գուշակել, որ Հաջի Համբարձումը ամբողջ 15 տարի իրեն հայհոյելուց յետոյ, մի օր, պէտք է ասի, «շատ ուրախ եմ որ Օրմանեանի մասին սխալ կարծիք եմ ունեցել»:

— Եթէ Լէօն 30 տարի «Հաջու» հետ աշխատել է «Մշակում», ու դարձեալ չի կարողացել նրան լաւ ճանանչել ու 15 տարուց յետոյ նա, ի լուր աշխարհի յայտարարեց, որ Հաջու մասին գրած պատմական վաւերագրերը ճշմարտութեանը չէ համապատասխանում... Միթէ յանցանք է, որ Հաջին 200 վերստ հետու ապրողի մասին սխալւի...— Այն, ինչ ներելի է Օրմանեանին, նոյնը չէ կարելի, Սամսոն Ստեփանիչին... եթէ առաջինը, հեռաւորութեան պատճառով լաւ չէ ծանօթ եղել մեր տղերանց գործելակերպին Սամսոնը իս թիֆլիսումը սկանաստես է եղել նրանց կատարած օխնրագութիւններին եթէ նա, մի քիչ, վաղ էր «խոտկել» «Մշակ»-ից, ու անցել միւսների շարքերը և վերջիններիս օրգաններում սկսեր «մատնիչ», դաւաճան և այլ նման տձականերով մի լաւ հայհոյել Հաջուն և Քալանթարին, այն ժամանակ, հայերը, Սամսոնի փոխարէն Պետական Գումայուճ Սաղաթելեանի և Տէր-Աւետիքեանի պէս պատգամաւորներ չէին ունենալ որոնցից՝ առաջին ասած ձառերի ազդեցութիւնից, Տաւրիկեան պալատի դահլիճը քանդեց. իսկ երկրորդի՝ նոյն դահլիճի առաստաղը փլուխ... ինչ և է, ես բացի ինձանից, Յովսէփ ամիրից, Հաջի Համբարձումից, և Աղայեանից (վերջինի միտքը լափ սաղինա) դուրսը՝ լաւ կաթողիկոսացու չեմ գտնում:

Մի զիւղացի. — Խրիմեան և Իգմիրլեան, իրենց հանրօգուտ գործունէութեամբ, ազգի մէջ հռչակ են ստացել երիտասարդ ժամանակներում: Ի գուր է բժշկապետը նրանց մեղադրում... Մեղադրեցէք, դիպլոմաւորներին, որոնք իրենց կուսակցական շահերի համար, ազգի այդ պաշտելի մարդկանց ոտը գերեզմանին հասած ժամանակ,



—Հաշում եմ, հաշում ե, տեսնում եմ, որ «Սուրճանդակ»-ի հրատարակութիւնից բաւականին օգուտներ ունեմ: Դիւրիմաբ ուզում եմ բաժանել այսպէս.— 10 հազար «Մշակ»-ին, 12 հազար «Հորիզոն»-ին, 5 հազար Էջմիածնին, 20 հազ. Բարեգործական ընկ., 30 հազ. Հրատարակ. ընկ., մնացեալն էլ Խօջիվանքի բարեգորդութեան համար:

ՕՏԱՐ ԻԻՄՕՐ



—Սիրելի փեսաս, կերակայէ՛ր որ կրնո՞ւ մի անգամ այսպէս զիջելիկ կելնի:
—Իսկ դու զորանչի՞ս, կերակայէ՛ր, որ ազգիկդ ամուսնուց շուտորո կրնայի՞ ե ինքը կընագնէ:

կաթողիկոս ընտրել տւին, որ յետոյ իրենք իսկ խայտարակէն նրանց:

Աղ. Տէր-Սնակեան.—Մեզ, Հաջու, Տէր-Գրիգորեանի և այլոց նման ծերացած կաթողիկոսացուներ պէտք չեն, այլ ջանիլ մտաւոր և ֆիզիքական ուժի տէր մարդիկ, որ կարողանան, «սուսկուսը» և գիշեր ցերեկ 29 ժամ անընդհատ բան անել, որոնք ոչ թէ միայն գործիք չզառնան, խորհրդով նշանակւած «խնորհիւսները» ձեռքին, այլ և այնքան ուժ ունենան, որ սկազուիների «ըմբոստացած» ժամանակը նրանց «վզակոթներին» տալով էջմիածնից դուրս անեն:

Հէնց այդ բոլորն ցրելը բերաւ «Սուրհանդակ» լրագիրը, որտեղ գրւած էր Տեղակալի հրամանը, որով Թիֆլիսի ընտրութիւնները յետաձգուեալ է մինչև սեպտեմբեր. իսկ Գանձակի մասին ոչ մի խօսք...

—Պատւիրակները, դրանից նեղանալով, անմիջապէս որոշեցին.—անջատել էջմիածնի ընդհանրական կաթողիկոսութիւնից, և զուտ Գանձակի նահանգի հայերի համար հակաթու կաթողիկոս ընտրել, մեր կաթողիկոսական յարմար թեկնածուներ են՝ բժշկապետ Տէր-Գրիգորեանը իսկ պատւիրակներ՝ Մովսէս Եպիսկոպոսեան և Աղ. Տէր-Սնակեան:

Մոծակ



Ամենախոնհար և «սէկրէտնի» գեկուցում «Սաթարալա» կուսակցութեան Արևմտեան բերքոյի լրագոր և Բագրի, Երևանի ու Հին-Նախիջևանի շրջանների ձախակողմեան խաթարալրասների լրագոր՝

Կլլան Յակոբից

I

Գասպար ջան. Երևանի Աստաֆեան փողոցի թոգերը բոլորով կուտալով և մի քանի բարիշնորքանց հետ բոլթայ տալիս, մէկ էլ ստացայ «Սաթարալա»-յի № 19, որտեղ սակութար աջ ձեռքով գրածդ հրամանով, բարձրացնում էք ինձ «երկրորդ էտաժս» աստիճանի:

Մի սնաթ ման հկայ, որ մի խելքը գրւ-

խին երկու էտաժանոց տներ գտնեմ, ու գլուխը բարձրանում, բայց չգտայ. էս կողմ, էն կողմ ընկայ, մէկ էլ աչքովս ընկաւ Ջանփոլազովի թատրոնը ու առանց խօսք ասելու կտուրը ելայ:

Այ հոգիդ լուսաւորւի Գասպար ջան, էս ինչ լաւ բաղդի արժանացրիր ինձ.— Տասը տարի չալիշ գայի, իսկի մի այսպիսի յարմար տեղ չէի գտնի, որ համ ազատեմ էտ բուլւարում գիմնադիտաների և գիմնադիտակաների ցանցաւ-մանցաւ դուրս տալուց, և համ էլ այսպէս ազատ կերպով քաղաքի քունջ ու պուճախը մտիկ տամ:

Ամբողջ քաղաքը կարծես թէ ձեռքին մէջը լինի, հէնց էնա ուզում էի գուլթանը (հեռուդիտակը) աչքիս դնեմ ու մի լաւ թամաշա անեմ, մէկ էլ տեսնեմ փալանով մի մարդ ա բարձրանում:

—էտ ինչո՞ւ ես բարձրացել այդտեղ— հարցրեց էտ մարդը.

—Ո՞նց թէ ինչո՞ւ. բարձրացել եմ էլի:

—Բայց ի՞նչ «պրաւա» ունիս:

—Իսկ ի՞նչ «պրաւա» է հարկաւոր Երևանում բարձր տեղ գրաւելու համար:

—Նախ և առաջ փող. փող ունիս. դու՛մի չէն էլ կընտրեն, թատրոնում էլ ձրի բաց կըթողնեն, էստեղի ուսում առած բարիշները տասը միանգամից քեզ վրայ չըսիրահարւեն և այլն, և այլն:

—Իսկ որ կողէկ էլա չունեմ:

—Որ չունես, քո ռիսիկ ո՞վ մտիկ կըտայ որ,— շուտ էդտեղից վէր արի:

—Բայց ես իրաւունք ունիմ—ասացի ևս ցոյց տալով «Սաթարալի» հրամանը:

էտ որ տեսաւ, խեղճը սփարթնից ու փասա փուսէն քաշեց:

Գուլթանը դրի աչքիս ու սկսեցի նայել: Առաջ ու առաջ աչքս ընկաւ «Օրիանտ» գաստինցի բաղը:

Այ անունը օրհնելի ուսում:

Երևանը էսքան է զարգացել, առաջ գընացել, որ էլ հաւան չի կենում սալգաթների զըռզըռացող մուզիկին ու էտ «Օրիանտ» գաստինցէն զակազ ա տեւլ մամզիւնների փափուկ-փափուկ ու նէժնի մարոժնի մուզիկայ: էտ մամզէլները նստած, մէկ ձեռքերով են նւագում, տասը էսքան էլ աչքերով ու ունքերով: Մեր էտ Երևանի ինչպիլիկենա ջահիլ ջուլները, որը իր զուխանը թողած, որը իր դալլաքիսանէն, որը իր սունը—քոմմա հաւաքել են դրանց շուրջը ու պիլա խմելով մայիլ են ֆիացել ու բերանների ջուրը դնում ա... Վախեցայ իմ բերնիս ջուրն էլ դնար, (դուն էլ, Գասպար ջան, որ իմ տեղ լինէիր, էտ օրը կընկնէիր) դուլթոնս ծանցի դէպի Ջանդուի ավիլ ու աչքս մեխեց յաջորդարանի և թեմական դպրոցի վրայ: Ու աչքդ բարին տեսնի, Գասպար աղա, լսիր տես ի՞նչեր տեսա.—տէր-ողորմիէն զցելով մի վեղարաւոր նստեց մի գլուխը փակ փայտօն ու փայտօնչուն դէպի դիմացի այգիները ցոյց տալով—սլացաւ ու աչքիցս կորաւ... Մէկ էլ տեսայ, մի դալմազալ բարձրացաւ, էտ պ. եր. ֆրանգեանն

էր. տաքացած, մազերը խառնածիճան, շորերը թոզոտ, աչքերը բոցով լցրած, հասաւ վանքի պատերին ու նկարեց— Գաստինցի գուլթամը բարձրանալ կտուրը, և այնտեղ պարսած, փիլիսոփոսայական գրքերով սրմբակոծել շուրջը գտնւած թեմականցիներին:

Աչքս դարձրի էն կողմը, ու շատ բաներ տեսայ, բայց վախենում եմ թէ գրեմ կարգազուրկ անես ինձ և Սևան ուղարկես մեղքերս քաւելու աչքերիս լոյսի պատճառով:

Գուլթոնս դարձրի դէպի քաղաքային դուճէն, որը ձայնաւորների ընտրութիւններ էր այդ բոլորն և ինչ որ տեսայ կը գրեմ միւս անգամ:

Կլլան Յակոբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ



կոմպլեկտեր

Table with 2 columns: Year (1906-1910) and Price (5, 7, 7, 7, 7 rubles).

Հին համարները հատով Թիֆլիսուս 10 կոպ., Թիֆլիսից դուրս 12 կ.: Իրմեկ՝ «Սաթարալա»-ի գրասենեակին

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

Հիւանդներ ընդունելու է, ըստ սովորութեան մայիսի 25-ից մինչև սեպտեմ. 10

Կ Ի Ս Լ Ա Վ Օ Գ Ս Կ Ռ Մ

ՕՏԵԼ ԲԵՇՏԱՌԻ

(օ. մ.) 20-3

Բ Ժ Ի Շ Կ

Ե. Ի. Միևաւեսնից

Երբքին և երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում: Ընդունելութիւնը առ. 9-11 ժ. երեկ. 5-7 ժ.: Ելիգաւետինսկայա, 39: 100-98

Բ Ժ Ի Շ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9-12 և երեկ. 6-9. Ելիգաւետեան փող. № 28. 000-100

Ի-ԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ

ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 ընդհանուր կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբաների քաղցրեղենների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ սպաղարած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2 ր 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ո. 20 կ., երկու գիրքը միասին 3 ո. 35 կ. (կարելի է մարկաններով). պահանջներով գիմել բացառապէս Յ. Կ. Սետերս, С. Петербургъ, Петербургск. сторона, Большой просп. №56—609, 483 0—4 (Կ. Կ. շ.)

ԲՈԼՈՐՈՎԻՆ

!! ՉԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրիպերով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է ծանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան զաղտնի հիւանդութիւնների սղամարդու, կանանց միզասեռական օրգանների», նկարներով և բազմաթիւ ընդհանրներով մօտ 250 երես Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւնների բժշկելու համար, բացի զաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաններով): Միակ պահեստը С. Петербургъ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петерсу 484 (Կ. Կ. շ.) 0—4

40 ՕՐ! ՉՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարգալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները թեկամ են),

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերադիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ., Պատւէրները կատարում է միակ պաշտօնը ամբողջ Ռուսաստանի համար: С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерсъ. 482 0—4 (Կ. Կ. շ.)

ԲԷՍՏՈՐԱՆ - ՃԱՇԵՐԱՆ

„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայրմար տեղ Քամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Հնարի ըմպելիներ, զով կաթինեա-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—6

== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է ==

Ն Ա Ր-Դ Ո Մ

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գրքի Է 75 կոպ. է

Դիլաւոր պահեստը «Խուտաները» գրատնութեամբ, ուր և դիմում են դուքսերով գնողները:

Первокл. ресторакъ „АННОНА“

„Здание Архитемического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 1½ час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. ИГРАЕТЪ КОНЦЕРТНЫЙ АЛЕКСАНДЕРЬ. СТРУННЫЙ ансамбль подъ управлениемъ

— ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1 час. до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биллиарды. Имѣются кабинеты. Получены Ростовск. раки, имѣется живаяя рыба; отъ жары можно спастись только въ „АННОНА“

52—5



ՅԵՐԵՎԱՆԻ
ՆՈՒՆԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



Handwritten signature of the artist.

—Լաւ երազներ ունէի, և երեզներում տեսնում էի՝ և՛ տներ, և՛ պարտէզ, և՛ աւտոմո... բայց ափսոս որ երազ էր
—Է՛, եթէ երազ չլինէր ինչ պիտի լինէր. հայ ազգից մի է խէր տեսել մը...

